

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Սերիա	[3] Համար
10	Դեկտեմբեր	2018 թ.				Բ	0925831428
[4] Մատուցման ամսաթիվը			Ճշգրտվող հաշիվ վավերագրի			Սերիա	Համար
10	Դեկտեմբեր	2018 թ.					
						Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Գնքման ամսաթիվ			[6] Համար	
			10 Դեկտեմբեր, 2018 թ.			Բ0925831428	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)							
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ							
[7.1] ՀԳՄ կտրոնի համար							

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	2	4	1	0	5	
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը									
[10] Անվանումը	«ՖԻՆԼՈՈՒ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՄՊԸ)								
[11] Բանկային տվյալները	ԱՐՆԵԻՆԲԱՆԿ ՓԲԸ			N 2474602078940000					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ								
[13] Լրացուցիչ տվյալներ									

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի									
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3	
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը									
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ								
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (ընկալության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ Փ. 46/5								
[19] Լրացուցիչ տվյալներ									
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		Համար						
	Լիազորագիր		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (ռովանդակությունը)	Չափի միավորներ	Ընդհանուր ծավալը կամ ծավալմուկայնությունը	Միավորի գինը	Զեղչ (%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն թր. գործ թիվ 14123416	նիշ	129858	1.39		180502.62
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 14123416	րոպե	2325	83.33		193742.25
3	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից արաբերեն թր. գործ թիվ 14161317	նիշ	228182	3.06		698236.92
4	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-արաբերեն-հայերեն թր. գործ թիվ 14161317	րոպե	3495	125		436875
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 17156516	ժամ	8	5000		40000
6	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 11809616	ժամ	7.5	5000		37500
7	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 14104717	րոպե	2320	83.33		193325.6
Ընդամենը						1780182.39

Մասնաշաղկապի
մատուցող
(աշխատանքի
կատարող)

SHAHINYAN VARDUHI 7803710425

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

10/12/2018 18:55:02



Մասնաշաղկապի
(աշխատանքի
ստացող)


(ստորագրությունը, անունը, ազգանունը)



քրեական գործով թարգման ներգրավելու մասին

02.06.2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ, Ա.Ն.Ալեքսանյանս քննարկելով վարույթին թիվ 14123416 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 14123416 քրեական գործով 01.06.2016թ. Արմեն Ռոմենի Ավագյանին նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննությամբ պարզվել է, որ Արմեն Ավագյանը չի տիրապետում ՀՀ դատավարական գրավոր լեզվին, սակայն տիրապետում է հայերեն բանավոր և ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռնել թարգմանի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իրավունքները:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 14123416 քրեական գործով ներգրավել որպես թարգման ներգրավել „Ֆինլոու“, ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանին, ով ունի բարձրագույն կրթություն, ավարտել է Վ. Բրյուսովի անվան ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը, ազատորեն տիրապետում է ինչպես ռուսերեն, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության /հայերեն/ գրավոր և բանավոր լեզվին:
2. Վարդուհի Շահինյանին պարգարանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ

Ա.Ալեքսանյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Վ. Շահինյան
« 02 » հունիսի 2016թ.

քրեական գործով թարգման ներգրավելու մասին

14.06.2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ, Ա.Չ.Ալեքսանյանս քննարկելով վարույթիս թիվ 14123416 քրեական գործի նյութերը:

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 14123416 քրեական գործով 09.06.2016թ. Արմեն Ռոմենի Ավագյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննությամբ պարզվել է, որ Արմեն Ավագյանը չի տիրապետում ՀՀ դատավարական գրավոր լեզվին, սակայն տիրապետում է հայերեն բանավոր և ուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռնել թարգմանի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իրավունքները:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 14123416 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու», ՄՊԸ-ի թարգմանիչ Շովինար Խոսրովի Թորոսյանին, ով ունի բարձրագույն կրթություն, ավարտել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետը, ազատորեն տիրապետում է ինչպես ուսերեն, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության /հայերեն/ գրավոր և բանավոր լեզվին:
2. Շովինար Թորոսյանին պարգարանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ

Ա. Ալեքսանյան

Օստիոգրա թարգմանի իրավունքների և պարտականություններից, նախազգուշացվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 14123416 քրեական գործով

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում քննված թիվ 14123416 քրեական գործով 02.06.2016թ. և 14.06.2016թ. որոշումներով որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդուհի Ավետիսի Շահինյանին և նույն կազմակերպության աշխատակից Օովինար Թորոսյանին, ովքեր սույն գործի շրջանակներում կատարել են 38 ժամ 45 րոպե տևողությամբ բանավոր թարգմանություն՝ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն, ինչպես նաև գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն 129.858 նիշ:

Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի քննիչ



Ա. Հ. Ալեքսանյան

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ ներգրավելու մասին

23 փետրվարի 2017թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Հ.Ս. Հովսեփյանս, քննարկելով վարույթիս թիվ 14161317 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

2017 թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 21:00-ին, ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում հսրայելի քաղաքացիներ, Թավրիզյան 38 տան բնակիչ Մուհամեդ Օմարի Մահամիդը, Կոմիտաս 49 շենքի 62 բնակարանի բնակիչներ՝ Դյաբ Յուսեֆի Նաջարն ու Անդլոս Յուսեֆի Նաջարը հաղորդում են տվել, որ 2016 թվականի սեպտեմբեր ամսին, իրենց ծանոթ, Սիրիայի քաղաքացի, Դավիթ Անհաղթ 12 շենքի 14 բնակարանի բնակիչ՝ Ջեան Նամարի Հադադը, իրենց ուսման վարձերը զեղչով վճարելու պատրվակով Կոմիտաս 52 հասցեի մոտ խաբեությամբ Մ.Մահամադից վերցրել է 800, իսկ Անդլոս և Դյաբ Նաջարներից 2000 ական Ամն դոլար գումար, սակայն չի վերադարձրել:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Մ. Մահամիդը, Անդլոս և Դյաբ Նաջարներին իրենց նույնաբովանդակ բացատրություններով հայտնել են, որ 2016-2017 ուսումնական տարվա իրենց ուսման վարձերը տվել են Ջ.Հադադին, քանի որ վերջինս խոստացել է զեղչով վճարել իրենց ուսման վարձերը, սակայն հետո պարզել են, որ չի վճարել, իսկ գումարները չի վերադարձրել ու այժմ համալսարանն ուսման վարձերը պահանջում է իրենցից:

Բացատրություն է տվել նաև Ջ.Հադադը, ով հայտնել է, որ ինքը որևէ ուսանողից ուսման վարձ չի վերցրել զեղչելու նպատակով, իսկ նշված գումարներն ինքը վերցրել է պարտքով:

Լրացուցիչ բացատրություններ են տվել Ա.Նաջան ու Մ.Մահամիդը, ովքեր պնդել են իրենց ուսման վարձերը զեղչելու նպատակով Ջ.Հադադին տալու հանգամանքը:

Դեպքի առթիվ 21.02.2017 թվականին ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 14161317 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ըստ քննչական ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիրի վարչական շրջանի քննչական բաժին:


Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Անդլոս Յուսեֆի Նաջարը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում է արաբերեն գրավոր և բանավոր լեզվին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ


Թիվ 14161317 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Մարալ Մարտիրոսի Զաքարյանին, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Հ.Ս. Հովսեփյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները
և պարտականությունները ինձ պարզաբանված են
Թարգմանիչ՝



« 23 » փետրվարի 2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Հ. Ս. Հովսեփյանս, վարույթումս քննվող թիվ 14161317 քրեական գործով 23.02.2017թ. որոշմամբ որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Մարալ Զաքարյանին, ով կատարել է 58 ժամ 15 րոպե տևողությամբ արաբերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն, ինչպես նաև գրավոր թարգմանություն արաբերենից հայերեն՝ 228182 նիշ:

Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի քննիչ՝



Հ. Հովսեփյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

« 27 » ապրիլի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ն.Կ.Բաղայանս, վերանայելով վարույթիս թիվ 17156516 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

Կարինե Համլետի Մանուկյանը 2016թ. փետրվարի 29-ի ժամը 22:30-ին ոստիկանության Նոր Նորքի բաժին հաղորդում է տվել այն մասին, որ իր ամուսնու քրոջ որդին՝ 03.02.1998 ծնված Համլետ Արսենի Տոնոյանը, 2013թ. հոկտեմբերի 10-ից մինչև 2014թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում, Ավան Նարեկացի թաղամասում գործող «Մշակույթի տան» մոտ գտնվող ավտոտնակների հետնամասում, դանակի սպառնալիքով բերանից սեռական հարաբերություն է ունեցել իր անչափահաս որդու՝ 01.12.2007թ. ծնված Արտակ Հայկի Կիրակոսյանի հետ:

Դեպքի առթիվ 10.03.2016թ. ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քր. օր-ի 139-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 17156516 քրեական գործը:

11.03.2016թ. թիվ 17156516 քրեական գործը ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին, ընդունվել վարույթ:

Քննության ընթացքում պարզվել է, որ Հ.Տոնոյանը չի տիրապետում հայերեն գրավոր ու բանավոր լեզվին և տիրապետում է ռուսերեն լեզվին:

Նկատի ունենալով, որ վկա Համլետ Արսենի Տոնոյանը, չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին, իսկ «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանը ազատորեն տիրապետում հայերեն և ռուսերեն լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 17156516 քրեական գործով «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Գագիկ Շիրմազանյանին ճանաչել թարգմանիչ՝ նրան պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝  Ն.Կ.Բաղայան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝  Գ.Շիրմազանյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Գ.Հայրապետյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ նույն բաժնի քննիչ Ն. Բադալյանի վարույթից իմ վարույթ փոխանցված թիվ 17156516 քրեական գործով «ՖԻՆԼՈՌԻ» ՍՊԸ ի թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանը, ով որպես թարգմանիչ է ներգրավվել 27.04.2016 թվականին, սույն քրեական գործի շրջանակներում կատարել է 8 ժամ ընդհանուր տևողությամբ հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ՝



Գ. Հայրապետյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով թարգման ներգրավելու մասին

25.08.2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի պվագ քննիչ Վ.Մովսիսյանս, քննարկելով վարույթունս գտնվող թիվ 11809616 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Անհայտ անձը 2016 թվականի օգոստոսի 12-ի՝ ժամը 20:00-ից մինչև 2016 թվականի օգոստոսի 13-ի՝ ժամը 09:45-ը ընկած ժամանակահատվածում՝ ուրիշի գույքը վնասելու դիտավորությամբ, չպարզված եղանակով քերծվածքների և գծերի ձևերով վնասել է Երևան քաղաքի Եղ.Թադևոսյան փողոցի 17 շենքի բակում կայանած Յուլիյա Ուստինովային պատկանող С 240 մակնիշի 83 XX 777 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի աջ և ձախ կողմերի առջևի և հետևի անվաթևերը, 4 դռները, բեռնախցիկի և շարժիչի ծածկոցի ու թափքի տանիքի մակերեսները՝ պատճառելով զգալի չափերի գույքային վնաս:

Փաստի առթիվ 23.08.2016. Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 11809616 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Յուլիյա Ուստինովան ճանաչվել է տուժող, որը լիազորել է իր շահերի ներկայացուցիչ հանդես գալու Մարտիկ Տաճատի Օրդուխանյանին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով Յուլիյա Ուստինովան չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է միայն ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել թարգմանիչ՝ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին՝ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15, 55 և 83 հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 11809616 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլու» ՍՊԸ-ի ռուսերենի լիազոր թարգմա Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին /անձնագիր՝ AM0552160/, որը ստացել է ռուսերեն լեզվից թարգմանչի համապատասխան որակավորում:
2. Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին պարզաբանել ՀՀ ՔՂՕ 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Վ.Մովսիսյան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին,
նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված
պատասխանատվության մասին:


« _____ » 2016թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 11809616 գործով

Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում քննվող թիվ 11809616 քրեական գործով 25.08.2016թ. որոշմամբ որպես թարգմանիչ ներգրավված «ՏԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Գագիկ Շիրմազանյանը կատարել է բանավոր թարգմանություն ռուսերենից հայերեն և ռուսերենից հայերեն 7 ժամ 30 րոպե տևողությամբ:

Շենգավիթ վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ



Վ. Մովսիսյան

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ ներգրավելու մասին

08 ապրիլի 2017թ.

ք.Երևան

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Հ.Ս. Հովսեփյանս, քննարկելով վարույթիս թիվ 14104717 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

2017թվականի ապրիլի 8-ին ժամը 3-ի սահմաններում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն է ահազանգել Աննա Անատոլիի Կուկուրեկովան և հայտնել, որ երկու անձանոք բանալիով բացել են իրենց տան դուռը, ինչ որ բան են փնտրել, իրեն տեսնելով դիմել են փախուստի:

Դեպքի վայրի զննությամբ պարզվել է, որ նույն օրը՝ ժամը 3-ի սահմաններում, երկու անհայտ անձինք, ավագակությամբ ուրիշի գույքը հափշտակելու նախնական համաձայնությամբ, որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ՝ չպարզված հանգամանքներում ալօբինի մուտք են գործել Աննա Կուկուրեկովայի կողմից վարձակալած Երևան քաղաքի Հ.Հակոբյան փողոց 4-րդ շենքի 9-րդ բնակարան, որից հետո նրանցից մեկը որպես զենք օգտագործվող էլեկտրահարող սարքը գործադրելով էլեկտրահարել է վերջինիս աջ ձեռքը, այնուհետև, կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով՝ ցուցադրել դանակը, իսկ մյուսը՝ սպառնալով ատրճանակով հափշտակել են զգալի չափերով՝ 339.661 ՀՀ դրամին համարժեք՝ 700 ԱՄՆ դոլար գումար, կանացի կաշվե պայուսակ, որի մեջ եղել է 6000 ՀՀ դրամ գումար և հարդարման պարագաներ ու դիմել փախուստի:

Դեպքի առթիվ 08.04.2017 թվականին ՀՀ քննչական կոմիտեի երանն քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ ամսի 1-ին, 3-րդ և 4-րդ եկտերի հատկանիշներով հարուցվել է թիվ 14104717 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նույն օրը որոշում է կայացվել Աննա Անատոլիի Կուկուրեկովային որպես տուժող ճանաչելու մասին:


Նախաքննության ընթացքում անհարժեշտություն է առաջացել, որպես վկա հարցաքննել Օլգա Վալերիի Ստորջիովային, ով չի տիրապետում դատավարության հայերեն գրավոր և բանավոր լեզվին. սակայն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Հաշվի առնելով այն որ անհրաժեշտ է որպես վկա հարցաքննել Օլգա Վալերիի Ստորջիովային, նրա ամսնակցությամբ կատարել անհրաժեշտ քննչական և դատավարական մի շարք գործողություններ. նրան ծանոթացնել կայացված որոշումներին ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 14104717 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝  Հ.Ս. Հովսեփյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են
Թարգմանիչ՝ 

« 08 » ապրիլի 2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Հ. Ս. Հովսեփյանս, վարույթումս քննվող թիվ 14104717 քրեական գործով 08.04.2017թ. որոշմամբ որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Գագիկ Շիրմազանյանին, ով կատարել է 38 ժամ 40 րոպե տևողությամբ հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն:

Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի քննիչ՝



Հ. Հովսեփյան